

ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍՏԵՐ

30.01.2017թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Ա.Սաֆյանը, Լ.Պետրոսյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ներքին աուդիտի վարչության պետ Ա.Մանանդյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ.Կոյունջյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի գլխավոր մասնագետ Ա.Թոխատյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ժողովրդագրության բաժնի երկրորդ կարգի մասնագետ Ս. Ազատյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ Ա. Մարտիրոսյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Զ. Ավոյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի առաջատար մասնագետ Կ.Ավետիսյանը:

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2009 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 37-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/

Որոշեցին՝

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2009թ.-ի նոյեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկին հանձնվող գույքի կազմը և չափը հաստատելու մասին» թիվ 37-Ա որոշմամբ հաստատված հավելվածի

- 1) 1-ին տողի «10 842.2» թիվը փոխարինել «10 467.2» թվով,
- 2) 2-րդ տողի «443 395.3» թիվը փոխարինել «519 113.4» թվով,
- 3) 4-րդ տողի «84 717.4» թիվը փոխարինել «85 234.4» թվով,
- 4) ընդամենը տողի «647 987.3» թիվը փոխարինել «723 848.4» թվով:

/Անհատական/

2. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

2.1. Հաղորդում՝ Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում 2016 թվականի դեկտեմբերի 6-ից 7-ը «ԱՊՀ երիտասարդությունը և գենդերային վիճակագրությունը» թեմայով աշխատանքային խորհրդակցությանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ /

/Զեկուցող՝ Զ.Ավոյան /

2.2. Հաղորդում՝ Լիտվայի Վիլնյուս քաղաքում 2016 թվականի դեկտեմբերի 6-ից 9-ը «Լիտվայի վիճակագրական համակարգին» ծանոթանալու նպատակով կազմակերպված հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Կ.Կույումջյան, Ա.Թոխատյան, Ս.Ազատյան/

2.3. Հաղորդում՝ Իտալիայի Հռոմ քաղաքում 2016 թվականի դեկտեմբերի 12-ից 15-ը «Մեծ տվյալների հասկացությունը և գործիքակազմը» թեմայով դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Վ.Դավթյան, Ա.Մարտիրոսյան, Կ.Ավետիսյան/

2.4. Հաղորդում՝ Վրաստանի Թբիլիսի քաղաքում 2016 թվականի դեկտեմբերի 14-ից 17-ը «Պետական ներքին ֆինանսական հսկողության բարեփոխումների առաջընթացը» միջազգային համաժողովին և «Հանրային հատվածի ներքին աուդիտում որակի ապահովում/երաշխավորում» թեմայով վերապատրաստմանը մասնակցելու վերաբերյալ:

/Ջեկուցող՝ Ա.Մանանյան/

2.5. Հաղորդում՝ Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում 2016 թվականի դեկտեմբերի 21-ին «Եվրասիական Տնտեսական Միության վիճակագրական գործունեության արդիական հարցեր» խորագրով Եվրասիական Տնտեսական Միության (ԵՏՄ) ազգային վիճակագրական ծառայությունների ղեկավարների նիստին մասնակցելու վերաբերյալ:

/Ջեկուցող՝ Ս.Մնացականյան/

2.6 Հաղորդում՝ Հարավաֆրիկյան Հանրապետության Քեյփթաուն քաղաքում 2017 թվականի հունվարի 15-ից 18-ը «ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի կողմից կազմակերպված ՄԱԿ-ի տվյալների համաշխարհային առաջին ֆորումին» մասնակցելու վերաբերյալ:

/Ջեկուցող՝ Ա.Սաֆյան/

2.7 Հաղորդում՝ Բելգիայի Բրյուսել քաղաքում 2017 թվականի հունվարի 25-ին Եվրոպական հանձնաժողովի Հարևանության և ընդլայնման բանակցությունների գլխավոր տնօրինության Թեմատիկ աջակցության, մշտադիտարկման և գնահատման բաժնի հրավերով Տնտեսական կառավարման թեմատիկ փորձաքննության կենտրոնի կողմից կազմակերպված ECO-NET հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Ջեկուցող՝ Ա.Սաֆյան/

Որոշեցին՝

արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն:

/Անհատական/

20.02.2017թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Ա.Սաֆյանը, Յու.Պողոսյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ

Գ.Մուրադյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Մ. Երիցյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմ տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Լ.Մարկոսյանը,

Լսեցին՝

1. «Հայաստանի Հանրապետությունում 2017 թվականին սպառողական գների ինդեքսի հաշվարկման համար սպառողական զամբյուղի կազմը և կառուցվածքը հաստատելու (համաձայն հավելվածի), և սպառողական գների ինդեքսի հաշվարկների համար 2016 թվականի դեկտեմբեր ամիսը որպես բազիսային ժամանակահատված ընդունելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Մ.Երիցյան /

Որոշեցին՝

հաստատել 2017 թվականին սպառողական գների ինդեքսի հաշվարկման համար սպառողական զամբյուղի կազմը և կառուցվածքը (համաձայն հավելվածի), և սպառողական գների ինդեքսի հաշվարկների համար 2016 թվականի դեկտեմբեր ամիսը սահմանել որպես բազիսային ժամանակահատված:

/Անհատական/

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության քաղաքացիական ծառայության առաջատար թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի աշխատակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության քաղաքացիական ծառայության առաջատար թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ, ինչպես նաև քաղաքացիական ծառայության առաջատար և կրտսեր պաշտոնները զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորում անցկացնող մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը հաստատելու մասին» թիվ 229-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/

Որոշեցին՝

հաստատել «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության քաղաքացիական ծառայության առաջատար թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի աշխատակարգը և ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 229-Ն որոշումը:

/Նորմատիվ/

3. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2008-2015 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտությունների անվանազերծված տվյալների բազաները Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան (ՀՌԿԿ-Հայաստան) հիմնադրամին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ.Մարկոսյան/

Որոշեցին՝

թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2008-2015 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազաները՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

Լսեցին՝

4. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

4.1. Հաղորդում՝ Վրաստանի Թբիլիսի քաղաքում 2017 թվականի փետրվարի 1-ից 8-ը «Բազմացուցանիշային քլաստերային հետազոտության նոր գործիքակազմին և չափորոշիչներին ինչպես նաև երեխաների և կանանց բարեկեցությունը բնութագրող ցուցանիշների միջազգային մեթոդաբանությանը ծանոթանալու վերաբերյալ»:

4.2 Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2017 թվականի փետրվարի 14-ից 15-ը Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի Բյուրոյի նիստին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ս.Մնացականյան/

Որոշեցին՝

արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն:

/Անհատական/